# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
Հեռ.՝ (254) 2-22-41, 2-25-77, Էլ. փոստ՝ tashir.lori@mta.gov.am

N 2201-19
*02 դեկտեմբեր 2019թ.*

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Կից ուղարկում ենք ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի NN 1202-Ա-1208-Ա որոշումները:

Առդիր՝ 10 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

*Կատարող՝ Ն. Սոլոյան*
*հեռ.՝0254-2-21-68*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 նոյեմբերի 2019 թվականի N 1202-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաշիրի համայնքապետարանի աշխատակիցների կողմից ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Ն.Ստեփանյան փողոց,թիվ 17 հասցեի բնակիչ Մարինա Ալիխանի Ուսուբովա կողմից Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախատում կատարելու հիմքով 2019թ. նոյեմբերի 26-ին կազմած 3/1 արձանագրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 113 հոդվածի 2-րդ մասով, 219.1-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ պարբերությունների, 37-րդ, 281-րդ, 282-րդ և 283-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀայստանիՀանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Ն.Ստեփանյան փողոց, թիվ 17 հասցեի բնակիչ Մարինա Ալիխանի Ուսուբովային ենթարկել վարչական պատասխանատվության Հյաստանի Հանրապետության վարչական իրավախատումների մասին օրենսգրքի 113 հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը կատարելու համար և նշանակել տուգանք 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:
2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081298 հաշվարկային հաշվին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելու օրվան հաջորդ օրվանից:
4. Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր

համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում;

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 26
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

27 նոյեմբերի 2019 թվականի   N 1203-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետը, 48-րդ կետը ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Սեդա Սեդրակի Բասենցյանին սեփականության իրավունքով պատկանող խանութին / անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N1608144, տրված՝ 04.05.2004/ ՀՀ Լոռու մարզ, քաղաք Տաշիր, կիրովի փողոց, մանաշենք թիվ 9 խանութ հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 6, Երևանյան փողոց, թիվ 196/2 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱԿԱՆԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 27
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ու Մ

27 նոյեմբերի 2019 թվականի N 1204-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով, 48-րդ կետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Ռաֆաել Աղեկյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը / անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N006266 տրված՝ 13.08.1998/ ՀՀ Լոռու մարզ, էռաղամաս «Վան» տուն 1 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վան բ/գ, թաղամաս 1, 5-րդ փողոց, թիվ 7 բնակելի տուն հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 27
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2019 թվականի N 1205-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 994-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետությնա օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Տաշիր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» թիվ 994-Ա որոշման 1-ին կետի «Գագիկ Հովսեփի» բառերը փոխարինել «Բաբիկ Հովսեփի» բառերով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2019թ. նոյեմբերի 27
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 նոյեմբերի 2019 թվականի N 1206-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 1095-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետությնա օրենքի 37-րդ հոդվածով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ուժը կորցած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Տաշիր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» թիվ 1095-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 28
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 նոյեմբերի 2019 թվականի N 1207-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 1194-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42 և 43 հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ի կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N1920-Ն որոշման 1-ին և 2.1 կետերով, Հայաստանի Հանրապետության 2015 թվականի ապրիլի 2-ի N 412-Ն որոշումով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 09.08.2007թ. N 1034-Ն որոշումը, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 Ն որոշումով հաստատված կարգի 29-րդկետի գ) ենթակետը, հաշվի առնելով, որ գրանցմանը ներկայացվող հողամասը Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1055 որոշմամբ, Տաշիր համայնքին անհատույց փոխանցվող հողամասերի ցանկում ընդգրկված է 009-007-01 ծածկագրով /0,47հա մակերեսով/ և չափագրման արդյունքում հաշվառվել է 06-008-0009-0011 կադաստրային ծածկագրով՝ 0,04607հա փաստացի մակերեսով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող (կադաստրային ծածկագիր 06-008-0009-0011) այլ հողամասերից 0,04607հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Հողամասի սահմանները որոշվում են «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 1-ին թաղամաս, Երևանյան փողոց, 25/9 հողամաս:

4. Ուժը կորցած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 18- ի «Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու եւ հիասցե տրամադրելու մասին» N 1194-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 28
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2019 թվականի N 1208-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔ, 10-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ, ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԱՆ ՍՈՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Արման Սոսի Ավետիսյանի (անձնագիր 000417899, տրված 20.02.2014) դիմումը, 1980թ. մարտի 27-ի Կալինինոյի գործադիր կոմիտեի նիստի թիվ 4 արձանագրությունից քաղվածքը, Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019 թվականի նոյեմբերի 1-ին կայացրած թիվ ԼԴ3/0316/02/19 վճիռը , «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. N2387-Ն որոշումը, նկատի ունենալով, որ տնատիրության սպասարկման համար օրիանական հատկացված 0,07հա հողամասը և կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով , որ փաստացի չափագրման արդյունքում հողամասի մակերեսը կազմում է 0,06416հա և այն, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001թ. մայիսի 15-ը՝ 1993թ.-ին, իսկ բաց պատշգամբը, պարիսպը, զուգարանը և ավտոտնակը 2001թ. մայիսի 15-ից հետո՝ 2014թ.-ին

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Արման Սոսի Ավետիսյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր քաղաք, 10-րդ թաղամաս, Շիրազի փողոց, թիվ 5 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 06-008-0230-0001) տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 0,06416հա մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Հողամասի չափերը որոշվում են Տաշիրի համայնքի ղեկավարի կողմից հաստատված և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծով:
3. Ճանաչել Արման Սոսի Ավետիսյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր քաղաք, 10-րդ թաղամաս, Շիրազի փողոց, թիվ 5 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 06-008-0230-0001) տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 0,06416հա մակերեսով հողամասի վրա գտնվող 97,51քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ:
4. Ինքնակամ համարել 8,5քմ պարիսպը, 19,8քմ զրուցարանը և 31,24քմ ավտոտնակը՝ համաձայն ներկայացվող շինությունների բնութագրի:
5. Տնատիրությանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 10-րդ թաղամաս, Շիրազի փողոց, թիվ 5 բնակելի տուն:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2019թ. նոյեմբերի 28
ք.Տաշիր